որ մենք հեշտ կուլ տալու պատառ չենք, այն ժամանակ իրանց չափը ճանաչեցին: Հիմա երկիւղից մեր գիւղի մօտովն էլ չեն համարձակւում անցնել. շատերը բարեկամացել են մեզ հետ, շատերն էլ մեր բարեկամութիւնն են որոնում...

— Եւ դուք հաւատո՞ւմ էք նրանց:

— Հաւատալու պէտք չունենք. «սոխը որտեղ էլ տնկես, իր համն ու հոտը չի կորցնի». այդպէս էլ քուրդը միշտ քուրդ կը մնայ: Բայց երբ նա տեսնում է, որ եթէ ինձ մի վնաս հասցնելու լինի՝ անպատիժ չի մնայ, սկսում է իր վարմունքների մէջ զգոյշ լինել ինձ հետ:

— Տեղային կառավարութիւնը ինչպէ՞ս էր նայում ձեր վարմունքների վրայ, երբ դուք սկսեցիք քրդերին քրդի ձեւով պատասխանել, այսինքն, ուզում եմ ասել, երբ սկսեցիք նոյնը անել, ինչ որ նրանք ձեզ հետ անում էին:

— Կառավարութիւնը եթէ խելք ունենար՝ պէտք է խրախուսէր մեզ, որովհետեւ մենք նրա գործը հեշտացնում էինք, անկարգներին պատժելով եւ խաղաղութիւնը վերականգնելով: Բայց նա սկզբում հալածեց մեզ, իր հին նախապաշարմունքով, թէ «գաւուրը իրաւունք չի պիտի ունենայ մահմեդականին այն անել, ինչ որ մահմեդականը նրան անում է: Եւ եթէ նա այնքան անզօր չլինէր, որպէս է մեր կողմերում, կարող էր վնասել մեզ:

Քահանայի պատասխանը աւելի պարզեց ռեսը, աւելացնելով.

— Գիտէ՞ք, պարոն բժշկապետ, մեր կառավարութիւնը փափուկ տեղերի փորփրողն է, երբ պինդ տեղը հասաւ, բրիչը մի կողմ կդնէ: Ինչո՞ւ մուդիրը, գայմագամը եւ դրանց նման այլ պաշտօնակալներ՝ քուրդ աւազակի, քուրդ մարդասպանի ետեւից չեն ընկնում, որովհետեւ գիտեն որ եթէ նրանց նեղացնելու լինեն, մի օր էլ իրանց տունը կողոպտոած կը տեսնեն, եւ իրանց գլուխն էլ իր տեղումը չի մնայ:

— Քրդից, իրաւ է, նրանք այդ երկիւղը կարող են ունենալ, բայց հայի՞ց...

— Հայից, ճշմարիտ է, չեն ունենայ, բայց ոչ ամէն հայից... — պատասխանեց ռեսը վիրաւորոած եղանակով: — Ինչո՞վ ենք մենք պակաս քրդից: Այս րոպէում, եթէ ձայն տալու լինեմ, ամբողջ գիւղը ոտքի կը կանգնէ, ուր որ ասելու լինեմ, կը գնան, ինչ որ հրամայելու լինեմ, կը կատարեն:

— Բայց մի գիւ՛ղ, լաւ մտածեցէք, ի՞նչ բան է մի գիւղը...

Ասլանը կարծես աշխատում էր բարկացնել ռեսին, որ նա աւելի ասէր, ինչ որ չէր ցանկանայ ասել: